ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ՍՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 10 Փետրուար 2019 | 97 | DIMANCHE, 10 Février

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
stgregorychurch@gmail.co | www.saintgregory.ca

Դ. Կիրակի զկնի Ծննդեան
4ème Dimanche aprés Noël

Աստուածաշունչի Ընթերցումներ
2-րդ Տիմոթէոս 2.15-26
Աւետարան Ըստ Յովհաննէսի 6.15-21

Les lectures de la Bible d'aujourd'hui :
2 Timothée: 2.15-26

Jean 6.15-21

Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Célébrant: Prêtre Paroissial
RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին
Office Matines à 9 :30
Ս. Պատարագ ժամը 10:30-ին
La Sainte Messe à 10:30
Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին
Office de Requieme à Midi

Deacons/Acolytes
Choirmaster: Mr. Sarkis Barsemian
Organist: Mr. Garen Manoucharyan

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES DE DIMANCHE

THE SUNDAY READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ ԳՐՈՒԱԾ 2-ՐԴ ՆԱՄԱԿԷՆ (2:15-26)

Ջանա՛ դուն քեզ գնահատելի ցոյց տալ Աստուծոյ առջեւ, ըլլալով այնպիսի գործաւոր մը՝ որ պիտի չամչնայ, շիտակ բացատրելով ճշմարտութեան խօսքը: Բայց հեռո՛ւ կեցիր սրբապիղծ ունայնաբանութիւններէն, քանի որ անոնք աւելի պիտի յառաջդիմեն ամբարշտութեան մէջ, եւ անոնց խօսքը պիտի ճարակէ քաղցկեղի պէս: Ասոնցմէ՛ են Հիմենոս եւ Փիղետոս, որոնք վրիպած են ճշմարտութենէն՝ ըսելով թէ մեռելներուն յարութիւնը արդէն եղած է, եւ կը կործանեն ոմանց հաւատքը: Սակայն Աստուծոյ հիմը ամուր կը կենայ եւ ունի սա՛ կնիքը. “Տէրը կը ճանչնայ անոնք որ իրն են”, նաեւ. “Ո՛վ որ կ՛արտասանէ Քրիստոսի անունը՝ թող հեռանայ անիրաւութենէ”:

Մեծ տան մը մէջ կան ո՛չ միայն ոսկիէ ու արծաթէ անօթներ, այլ նաեւ փայտէ եւ հողէ անօթներ: Ոմանք պատիւի համար են, ու ոմանք՝ անպատուութեան համար: Ուստի եթէ մէկը մաքրէ ինքզինք ասոնցմէ, պիտի ըլլայ պատիւի անօթ մը՝ սրբացած եւ պիտանի իր Տէրոջ, պատրաստուած ամէն բարի գործի համար: Փախի՛ր նաեւ երիտասարդական ցանկութիւններէն, ու հետամո՛ւտ եղիր արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, անո՛նց հետ՝ որ կը կանչեն Տէրոջ անունը մաքուր սիրտով: Բայց հրաժարէ՛ յիմար եւ անիմաստ վէճերէն, գիտնալով որ կռիւներ կը ծնին անոնցմէ: Տէրոջ ծառան պէտք չէ կռուի, հապա՝ ըլլայ հեզահամբոյր բոլորին հանդէպ, սորվեցնելու ընդունակ, անոխակալ, ընդդիմացողները հեզութեամբ կրթող, որ թերեւս

Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը գիտնալու համար, ու սթափին Չարախօսին թակարդէն, որմէ բռնուած են՝ անոր կամքին ծառայելու:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (6.15-21)

Ուրեմն Յիսուս, գիտնալով թէ պիտի գան յափշտակելու զինք՝ որպէսզի թագաւոր ընեն զինք, դարձեալ լեռը գնաց՝ առանձին:

Երբ իրիկուն եղաւ՝ իր աշակերտները իջան ծովեզերքը, ու նաւ մտնելով կ՝երթային ծովուն միւս կողմը՝ Կափառնա-յում: Արդէն մթնցած էր, բայց դեռ Յիսուս եկած չէր իրենց: Ծովն ալ ալեկոծ էր՝ սաստիկ փչող հովէն: Երբ թի վարելով քսանհինգ կամ երեսուն ասպարէզի չափ գացին՝ տեսան Յիսուսը, որ կը մօտենար նաւուն՝ ծովուն վրայ քալելով, ու վախցան: Բայց ինք ըսաւ անոնց. «Ե՛ս եմ, մի՛ վախնաք»: Ուստի ուզեցին ընդունիլ զինք նաւուն մէջ. եւ նաւը իսկոյն հասաւ այն երկիրը՝ ուր կ՝երթային:

2 Timothée 2.15-26

Etudie-toi de te rendre approuvé à Dieu, ouvrier sans reproche, enseignant purement la parole de la vérité. Mais réprime les disputes vaines et profanes, car elles passeront plus avant dans l'impiété; Et leur parole rongera comme une gangrène, et entre ceux-là sont Hyménée et Philète; Qui se sont écartés de la vérité, en disant que la résurrection est déjà arrivée, et qui renversent la foi de quelques-uns. Toutefois le fondement de Dieu demeure ferme, ayant ce sceau : le Seigneur connaît ceux qui sont siens; et, quiconque invoque le nom de Christ, qu'il se retire de l'iniquité. Or dans une grande maison il n'y a pas seulement des vaisseaux d'or et d'argent, mais il y en a aussi de bois et de terre : les uns à honneur, et les autres à déshonneur. Si quelqu'un donc se purifie de ces choses, il sera un vaisseau

sanctifié à honneur, et utile au Seigneur, et préparé à toute bonne œuvre. Fuis aussi les désirs de la jeunesse, et recherche la justice, la foi, la charité, et la paix avec ceux qui invoquent d'un cœur pur le Seigneur. Et rejette les questions folles, et qui sont sans instruction, sachant qu'elles ne font que produire des querelles. Or il ne faut pas que le serviteur du Seigneur soit querelleur, mais doux envers tout le monde, propre à enseigner, supportant patiemment les mauvais. Enseignant avec douceur ceux qui ont un sentiment contraire, [afin d'essayer] si quelque jour Dieu leur donnera la repentance pour reconnaître la vérité; Et afin qu'ils se réveillent [pour sortir] des pièges du Démon, par lequel ils ont été pris pour faire sa volonté.

Jean 6.15-21

Mais Jésus ayant connu qu'ils devaient venir l'enlever afin de le faire Roi, se retira encore tout seul en la montagne.

Et quand le soir fut venu, ses Disciples descendirent à la mer. Et étant montés dans la nacelle, ils passaient au-delà de la mer vers Capernaüm, et il était déjà nuit, que Jésus n'était pas encore venu à eux. Et la mer s'éleva par un grand vent qui soufflait. Mais après qu'ils eurent ramé environ vingt-cinq ou trente stades, ils virent Jésus marchant sur la mer, et s'approchant de la nacelle; et ils eurent peur. Mais il leur dit : c'est moi, ne craignez point. Ils le reçurent donc avec plaisir dans la nacelle, et aussitôt la nacelle prit terre [au lieu] où ils allaient.

ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

«Միայն ան է հարուստը, ով որ Աստուծոյ հետ է»

Թադէոս վրդ. Վիտովնիցկի

«Մենք երեխաներուն կը սորվեցնենք ո՛չ թէ այն, ինչ որ կ'ուզենք եւ ո՛չ թէ այն, ինչ որ մենք գիտենք, այլ այն ինչ որ մենք մեզի կը հանդիսանանք»

Հայր Գաբրիէլ Աթոսացի

Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն .

« Ես եմ մի վախնաք » (Յովհ. 6-20)

Սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ,

Մինչ ես կ'անցնիմ այս հրաշալի պատմութեան՝ նախ հարկ կը համարեմ յիշեցնել ձեզի, թէ ինչ որ Աստուած կ'ըսէ մեզի Սուրբ Գիրքին միջոցով՝ մեզի համար յստակ իմաստ ու նշանա-կութիւն ունի: Յիսուս Քրիստոսի կատարած հրաշքներն ալ մեզի համար իւրօրինակ բացայայտում կը հանդիսանան՝ ուղարկ-ւած Աստուծոյ կողմէ: Իւրաքանչիւր գործողութեան ետեւ կանգ-նած է Անոր իմաստութիւնը, կամքն ու նպատակը:

Այսպէս, այն դրուագը, որուն մասին աւետարանիչներէն ե-րեքը՝ Մատթէոսը, Մարկոսը եւ Յովհաննէսը կը պատմեն Յիսու-սի Գալիլիոյ ծովու ջուրերուն վրայէն քալելուն մասին: Սակայն չորս աւետարանիչներն ալ կը պատմեն այս դէպքին նախորդող Յիսուսին մէկ այլ մեծագոյն հրաշքին մասին՝ հինգ հազար ժո-ղովուրդին հինգ նկանակով եւ երկու ձուկով կերակրուելուն մա-սին: Յովհաննէս Աւետարանիչը կը բացատրէ, թէ ինչո'ւ անմի-ջապէս այդ դէպքէն յետոյ Յիսուս առանձին ուղարկեց աշա-կերտները, իսկ ինք՝ առանձին լեռ բարձրացաւ. «Երբ Յիսուս ի-մացաւ, որ պիտի գան զինք տանելու եւ թագաւոր ընելու, դարձ-եալ առանձին դէպի լեռ գնաց» (Յովհ. 6:15): Այսինքն այն դէպ-քին նման, երբ սատանան Յիսուսին փորձեց անապատին մէջ, ըսելով. թէ աշխարհի բոլոր տէրութիւնները Անոր կու տայ, մի-այն թէ իրեն երկրպագէ, այժմ ժողովուրդը՝ հիացած Յիսուսին գործած հրաշքով, կ'ուզէր անոր թագաւոր կարգել: Այդ պատճա-ռով ալ Յիսուս ուղղակի հեռացաւ այդ ժողովուրդէն ու առանձին լեռ բարձրացաւ:

Այժմ պահ մը միտքով ետ երթանք դարերու խորքը եւ թոյլ տանք, որ այդ գիշերը, իր բոլոր մանրամասնութիւններով, հաս-

նիլ մեր երեւակայութեան մէջ: Պատկերացուցէ՛ք, շուրջ բոլորը անթափանց, խաւար գիշեր է, փոթորիկ, հսկայական ալիքները սարսափազդու կերպով կը տարուբերեն նաւակը, որուն մէջ առաքեալներն են, եւ կը թուի, թէ վախճանը անխուսափելի է: Առաքեալները սարսափի մէջ են, անոնք իրենց լքուած կը զգան Տիրոջ կողմէ: Մի՞թէ այս նոյնը մեզի հետ չի կատարուիր, երբ մենք փորձութիւններու կամ նեղութեան մէջ կը յայտնուինք: Եր-բեմն մեզի կը թուի, թէ Աստուած լքած է մեզ, առանձին ձգած է մեր ցաւերուն հետ եւ այլեւս ոչ մէկ յոյս ու փրկութիւն չկայ մեզ պարուրուած խաւարէն: Բայց չէ՞ որ այդ ժամանակ Աստուծոյ Որդին կանգնած էր լեռան բարձունքին ու կ'աղօթէր: Կ'աղօթէր աշխարհին համար, անոնց համար, որոնք ներքեւն էին եւ կը պայքարէին ալիքներուն դէմ:

Այդպէս ալ հիմա, մեր ժամանակներուն մէջ, երբ մենք ռեւէ դժուարութեան կը հանդիպինք՝ պիտի յիշենք, որ Փրկիչ ունինք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, որ միշտ շատ մօտ է մեզի՝ բարձունքին մէջ կանգնած ու կը տեսնէ ամէն ինչ: Իսկ Անոր աշակերտները մոռցած էին այդ մասին եւ այդ պատճառով ալ սարսափի մէջ էին: Իսկ Տէրը ոչ միայն բարձունքին մէջ կանգնած կ'աղօթէր անոնց համար, այլեւ փութաց ներքեւ իջնելու ու վայրկեան մը առաջ օգնութեան հասնելու Իր սիրելի աշակերտներուն: Կը կարծեմ ամենարագ ճամբան անոնց հասնելու եւ օգնելու՝ ջուրերուն վրայէն երթալն էր, քանի որ քամին հանդիպակաց կողմէն կը փչէր եւ հաւանական է, որ այն ափը, ուր Յիսուս կը գտնուէր, նաւակ ալ չկար, որ անոր հետ հասնէր անոնց: Իսկ Ան շատ կը սիրէր Իր աշակերտները եւ կ'ուզէր օգնել անոնց, անոնց կողքին ըլլալ: Իսկ աշակերտները խաւարին մէջ հազիւ նշմարելով դէպի իրենց եկող մէկը, սարսափէն սկսան պոռալ, քանի որ կարծե-ցին, թէ մահուան ուրուականը իրենց կ'այցելէր: Եւ միեւնոյն ժամանակ լսեցին Անոր ձայնը, որ կ'ըսէր. «Սրտապնդուեցէ՛ք, ես եմ, մի՛ վախնաք»:

Նոյնպէս ալ մեզի հետ կը պատահի, երբ կեանքը բոլորովին անտանելի կը դառնայ: Այդ ժամանակ մեր Փրկիչին ձայնը կ'ըսէ մեզի. «Ես հոս եմ, մի՛ վախնաք: Կեանքը, ծովը եւ ամէն ինչ ինձ կ'ենթարկուին, միայն թէ հաւատացէք եւ Ինծի յուսացէք»: Տէրը մեզ մօտ կու գայ: Ան ընդառաջ կու գայ մեզի, սակայն մենք չենք

նկատեր: Կը մօտենայ, բայց դեռ չենք տեսներ, քանի որ մեր սիրտը կուրացած կ'ըլլայ վախէն:

Երբ մենք կը կանգնինք փրկութեան ճամբուն վրայ, ապա այդ նոյնն է, ինչպէս ծովի ջուրերուն վրայէն քալելը: Կարեւորը այն է, որ մենք ամբողջովին վստահինք Աստուծոյ՝ դէպի Անոր ընթանանք եւ ուշադրութիւն չդարձնենք մեր չորս կողմը ծփացող ալիքներուն, որպէսզի Պետրոսին նման չսկսինք սուզուիլ: Պիտի յիշենք, որ Աստուած մեր կողքին է, Անոր ամենազօր Աջը միշտ դէպի մեզ ուղղուած է, միայն թէ բռնենք եւ նոյնիսկ անհնարին թուող դժուարութիւնը՝ Անոր կամքով յաղթահարենք: Ինչպէս Պետրոսը պատրաստակամութիւն յայտնեց հետեւելու Տիրոջ օրինակին, այնպէս ալ մենք պիտի ընենք: Անոր կատարեալ կերպարը միշտ պիտի ունենանք մեր առջեւ ու հետեւինք Անոր: Երթանք առանց ոեւէ բանէ վախնալու, առանց ուշադրութիւն դարձնելու մեր շուրջը փոթորկուող խնդիրներուն: Երթանք ու պատրաստ ըլլանք շարունակելու մեր ընթացքը նոյնիսկ առանձին, քանի որ Պետրոսն ալ առանձին գնաց եւ միւս առաքեալները սարսափէն քարացած՝ չհետեւեցան անոր: Յառաջ երթանք ու նայինք միմիայն Աստուծոյ ուղղութեամբ եւ երբեք չենք սուզուիր, բայց եթէ նոյնիսկ շեղունինք ճշմարիտ ճամբէն, դադրինք հաւատալ ու սկսինք խեղդուիլ, ապա նորէն օրինակ առնենք Պետրոսէն եւ մեր սիրտերու ամբողջ զօրութեամբ կանչենք Տիրոջը՝ ըսելով. «Տէր, փրկէ զիս, կը խեղդուիմ»: Եւ այն ատեն, միանշանակ, մեր Բարեգութ Հայրը Իր օգնութեան ձեռքը կը մեկնէ ու դուրս կը հանէ մեզի:

Այս դրուագին միջոցով Աստուած ցոյց կու տայ, թէ ինչ կը սպասէ Իր զաւակներէն: Ան կ'ուզէ, որ մենք քալենք ջուրերու վրայէն ու ընենք այդ ամէն օր: Այսինքն, ամէն օր մենք կրնանք հանդիպիլ դժուարութիւններու, որոնք կը ստիպեն մեզի խեղդուելու վախի, կասկածի ու անհաւատութեան մէջ: Եւ իւրաքանչիւր օր մենք կրնանք ապրիլ՝ հենուելով Աստուծոյ զօրութեան վրայ:

Այս հրաշքով Յիսուս նաեւ ցոյց կու տայ Իր աշակերտներուն եւ բոլորիս, որ իրական հաւատացեալին համար, որուն հայեացքը ուղղուած է առ Աստուած, անհնարին բան չկայ: Անոր մասին կը վկայէ նաեւ Յովհաննէսի աւետարանը «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ ով կը հաւատայ ինծի, ինքն ալ կ'ընէ այն գործե-

ը, որ ես կ'ընեմ. եւ անոնցմէ աւելի մեծերը կ'ընէ, որովհետեւ ես կ'երթամ Հօրս մօտ» (Յովհ. 14:12):

Ան կ'ուզէ, որ բոլոր հաւատացեալ քրիստոնեաները իրենց կեանքով ցոյց տան Աստուծոյ սէրը, ուժն ու կարողութիւնը: Յիշե՛նք, որ Աստուած լեցուն է սիրով ու կարեկցանքով: Եւ միշտ պատրաստ է օգնելու եւ աջակցելու մեզի, միայն թէ մենք դէպի Անոր ընթանանք: Ինչ որ ալ պատահի մեր ճամբուն վրայ, սորվինք հաւատալ ու ամբողջովին վստահիլ մեր Երկնաւոր Հօր եւ հետեւինք Անոր խօսքին:

Այս պատմութիւնը շատոնց եղած է: Երկու հազար տարի առաջ: Սակայն այդ բոլոր դարերու ընթացքին եւ մինչեւ հիմա ալ միլիոնաւոր մարդիկ կը շարունակեն «ընթանալ ջուրերու վրայէն»: Ամբողջ աշխարհին մէջ մարդիկ կը շարունակեն տեսնել Անոր, Ով որ կը քալէ կեանքի ալիքներուն վրայէն եւ կու գայ դէպի մեզի, դէպի մեղաւորներուս, մոլորուածներուս ու տռապեալներուս եւ կ'ըսէ. «Սրտապնդուեցէ՛ք, ես եմ, մի՛ վախնաք: Միշտ ձեր կողքին եմ: Միշտ պատրաստ եմ օգնելու ձեզի: Միայն թէ մի կասկածիք: Միայն թէ դէպի Ինձ դարձէք»: Եւ թող մեր Տէր Յիսուս Քրիստոս մեզի հետ ըլլայ այժմ, միշտ եւ յաւիտեանս, ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան

Հոգեւոր հովիւ

Résume du Sermon

"N'ayez pas peur"

Ce sont les paroles d'encouragement de Jésus adressées aux disciples affoles lorsque, le voyant marcher sur les eaux, ils le prennent pour un fantôme.

Ce message de Jésus est le bras tendu de Dieu vers l'homme pour qu’il garde l'espoir : donc la foi.

La peur nous fait douter de l'intérêt que Dieu nous porte et nous perdons notre mémoire spirituelle.

N'oublions pas ce que Jésus a fait et combien il a été bon pour nous.

La foi n'élimine pas la peur mais l'amoindrit et nous rapproche de Dieu.

En Foi et en Prière
Père David Margaryan
Prêtre paroissial

ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ - ՀԱՒԱՏՔՈՎ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

(Քրիստոսի հաւատացող իւրաքանչիւր անձի աղօթք)

22-Դատաւո՛ր արդար, երբ Հօր փառքով գաս ողջերն ու մեռելները դատելու, քու ծառայիդ հետ դատավարութեան մի՛ մտներ, այլ փրկէ զիս յաւիտենական կրակէն, եւ ինծի լսելի ըրէ՝ արդարներուն դէպի երկինքի Արքայութեանդ երանաւէտ կոչումը.
եւ ողորմէ՛ Քու արարածներուդ . եւ ինծի՝ բազմամեղիս:
23-Ամենողո՛րմ Տէ՛ր, ողորմէ՛ բոլոր քեզի հաւատացողներուն, իմիններուս եւ օտարներուն, ծանօթներուս եւ անծանօթներուն, ողջերուն եւ մեռելներուն, եւ թողութիւն շնորհէ՛ իմ թշնամիներուս եւ ատելիներուս, որ ինծի հանդէպ յանցապարտ են, եւ դարձո՛ւր զանոնք, իմ մասիս՝ իրենց մտադրած չարիքներէն, որպէսզի արժանի ըլլան քու ողորմութեանդ.
եւ ողորմէ՛ Քու արարածներուդ . եւ ինծի՝ բազմամեղիս:
24-Փառաւորեա՛լ Տէ՛ր, ընդունէ՛ քու ծառայիդ աղաչանքները, եւ դէպի բարին կատարէ՛ իմ խնդրուածքներս. բարեխօսութեամբ Սրբուհի Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, եւ Սրբոյն Գրիգորի՝ մեր Լուսաւորչին, եւ Սուրբ Առաքեալներուն, Մարգարէներուն, Վարդապետներուն, Մարտիրոսներուն, Հայրապետներուն, Ճգնաւորներուն, Կոյսերուն, Մենակեացներուն, եւ քու երկնային եւ երկրաւոր բոլոր Սուրբերուդ, եւ քեզ փառք եւ երկրպագութիւն՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

JE CONFESSE AVEC FOI

22. Ô juste Juge, lorsque tu viendras dans la gloire du Père pour juger les vivants et les morts, n'entre pas en jugement avec ton serviteur, mais délivre-moi du feu éternel et fais-moi entendre l'appel joyeux des justes pour que j'entre dans ton Royaume céleste. Aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur !
23. Seigneur, plein de miséricorde, aie pitié de tous ceux qui croient en Toi : parents et étrangers, connus et inconnus, vivants et morts, accorde aussi à mes ennemis et à ceux qui me haïssent la rémission des fautes commises contre moi ; détourne-les du mal contracté à cause de moi, pour qu'ils soient dignes de ta miséricorde. Aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur !
24. Ô Seigneur de gloire, reçois la supplication de ton serviteur et dans ta bonté, exauce mes demandes, par l'intercession de la sainte Mère de Dieu, de Jean-Baptiste, de saint Etienne, premier martyr, de saint Grégoire, notre Illuminateur, des saints Apôtres, des prophètes, des docteurs, des martyrs, des saints patriarches, des anachorètes, des moniales et de tous les saints qui sont au ciel et sur la terre. A Toi la gloire et l'adoration, ô sainte et indivisible Trinité, dans les éternités des éternités. Amen.

Սիրելի հաւատացեալներ,
Անոնք որոնք կը փափաքին, որ Հոգեւոր հովիւը այցելութիւն կատարէ իրենց հիւանդ ընտանեկան պարագաներուն կամ հարազատներուն
Կրնան կապ հաստատել՝ Տէր Հօր հետ հեռաձայնելով՝ (514) 448-2809 կամ Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Dear Parishioners,
If you have family members or relatives that you wish to have spiritual support
Please feel free to contact Fr. David Margaryan directly at (514) 448-2809 or call the secretariat at (514) 279-3066

ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱՒԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ

Տնօրինէք փափաքող հաւատացեալները կրնան հեռաձայնել
Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանին՝ (514) 448-2809
կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing. To request a Home Blessing, please contact with Fr. David Margaryan at (514) 448-2809 or church office at (514) 279-3066.

ԽՈՐՀՈՒՐԴ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆԻ

Ի գիտութիւն կը յայտնենք անոնց՝ որոնք իրենց հանգուցեալ սիրելիին կամ հարազատին համար ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ կատարել կու տան, պէտք է նկատի ունենալ թէ անհրաժեշտ է Սուրբ Պատարագի սկիզբէն ներկայ գտնուիլ եկեղեցի եւ մասնակցիլ աղօթքներուն. վասն զի, Սուրբ Պատարագի վերջաւորութեան կատարուելիք Հոգեհանգստեան Պաշտօնէն զատ, Պատարագիչ քահանան իր լուռ աղօթքներուն մէջ եւս կը յիշէ մեր բոլոր ննջեցեալներն ու յատկապէս անոնք՝ որոնց համար խնդրանք մատուցուած է:

CONSEIL POUR LES MESSES DE REQUIEM

Nous informons les personnes qui désirent faire dire un REQUIEM à l’intention de leur chers disparus, qu’elles doivent être présentes à l’église dès le début de la Sainte Messe puisque le père évoque le nom des défunts dans ses prières cachées pendant la Sainte Messe. Il est même préférable de donner le nom des défunts la veille en prévenant l’Église ou en contactant le Père.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,
գթա քո արարչական սիրովդ
ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:
Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:
Արա արժանի ողորմութեան քաւութեան
եւ թողութեան մեղաց:
Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո
յաջակողմեան դասուն:
Զի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:
Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE REPOS DE L'ÂME | **SERVICE FOR THE REPOSE OF SOUL**

ԿԻՐԱԿԻ, 10 Փետրուար 2019

Օրդ. Վարդենի Պապոյեանի խնդրանքով հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի իր սիրեցեալ ծնողաց՝
ՂԵՒՈՆԴ ԵՒ ԹԱԳՈՒՀԻ ՊԱՊՈՅԵԱՆՆԵՐՈՒ
(GHEVONT & TAKOUHI BABOYAN)
ինչպէս նաեւ՝
ՊԱՊՈՅԵԱՆ ԵՒ ՍԱՀԱԿԵԱՆ(BABOYAN & SAHAGIAN)
Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ

Տ. եւ Տիկ. Պերճ եւ Անի Էմիրզէ,
Տ. եւ Տիկ. Գրիգոր Էօզթուրշուճեանի Եւ Թոռներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝
ՄԱՔՐՈՒՀԻ ԷՕԶԹՈՒՐՇՈՒՃԵԱՆԻ (MAKRUHI OZTURSUCIYAN)
Մահուան առաջին տարելիցին առիթով
ինչպէս նաեւ իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝
ՄԻՀՐԱՆ ԷՕԶԹՈՒՐՇՈՒՃԵԱՆԻ (MIHRAN OZTURSUCIYAN)
Մահուան 38-րդ տարելիցին առիթով

Տ. եւ Տիկ. Պերճ եւ Անի Էմիրզէ,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ծնողաց՝
ԲԵՐՈՒԶ ԵՒ ԱՐՏԱՇԵՍ ԷՄԻՐԶԷԻ
(PERUZ & ARDASHES EMIRZE)
Մահուան 32-րդ տարելիցին առիթով
ինչպէս նաեւ իրենց սիրեցեալ եղբօր՝
ԱՐԱ ԷՄԻՐԶԷԻ (ARA EMIRZE)
Մահուան 7-րդ տարելիցին առիթով

ՏԷՐԸ ՅԻՇԷ ՆՆՋԵՑԵԱԼՆՆԵՐԸ ԵՒ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՑՆԷ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON À L'ÉGLISE

DONATION FOR THE CHURCH

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of January 2019
have been received with great appreciation

CHURCH:

Mr. Manvel Markosyan $50, Mr. Hrant Grigoryan $15

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE AYDA BELER:

Beler Family $1000, Kepekci Family $150, Mrs. Nazli Kayzak, Mr. & Mrs. Haik Manoukian $100, Mr. & Mrs. Krikor & Irma Merekyan, Mr. Jirair Yeramian, Mr. Levon Senoglu, Mr. & Mrs. Avedis & Mari Basmacioglu, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian $50, Mr. Vahan Sekeryan $30, Mrs. Sandra Sheehan $20

THE LATE MANUSAK HARPUT:

Mr. & Mrs. Shahan Guler $100

HOKEHANKISD:

THE LATE ALICE KALOUSDIAN KRIKORIAN:

Mr. Khatchig Krikorian, Mr. & Mrs. Raffi & Siran Chitilian, Mr. & Mrs. Mher & Choghig Tenkerian $50

THE LATE ARPIE DJENGUERIAN & NEVART DEMIRDJIAN:

Mr. Ara Demirdjian $100, Mrs. Salpy Demirdjian $75, Mrs. Seta Gulbankian $50

THE LATE BABOYAN FAMILY:

Miss Varteni Baboyan $20

TZNOUNT YOUGHAKIN:

Mrs. Irma Basmajian $50

ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հրաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդութիւն ստանալէ առաջ:
2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատրաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պէտք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ : Եկեղեցին ա-ղօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՌՈՒԹԻՒՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ պէտք է տիրէ:

OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

1) Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
3) Chaque fois que nous entrons dans l'Eglise pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
4) Il est rappelé que l'Eglise est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.

Website: ***www.saintgregory.ca***

Սիրելի հաւատացեալներ,
Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի,
թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ
Կայքէջը - Website www.saintgregory.ca
Ուր կարելի է գտնել Եկեղեցւոյ յայտարարութիւնները
եւ ձեռնարկները:
Կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները
եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն
համացանցային դրութեամբ:
Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Chers Paroissiens,
Nous avons le plaisir de vous informer
de la récente mise à jour de notre
Site: *www.saintgregory.ca*
Ou vous trouvez les dernières nouvelles des activités
et des événements.
Nous remercions de votre soutien!

Dear Parishioners,
We are glad to inform you our Church's newly developed
Website: www.saintgregory.ca
where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations
and benefiting from other possibilities of our Website.
Thank you for your support!

Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմէական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծխական Խորհուրդ

Attention to our beloved parishioners

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՁԻ

(Տօն Քրիստոսի քառասնօրեայ Տաճար գալստեան)

ՆԱԽԱՏՕՆԱԿ

Հանդիսաւոր Ժամերգութիւն եւ Նախատօնակ

Նորապսակներու
եւ նոր նշանադրեալներու
օրհնութիւն

Չորեքշաբթի՝ 13 Փետրուար
2019, երեկոյեան ժամը 7-ին

Յաւարտ արարողութեան
Հիւրասիրութիւն
<< Վաչէ Յովսէփեան >>
սրահին մէջ

Սիրով կը հրաւիրենք
Հաւատացեալ մեր ժողովուրդը
եւ մասնաւորաբար
նորապսակներն
ու նոր նշանադրեալները

հաղորդակից դառնալու օրուայ խորհուրդին եւ օրհնութիւն ստանալու:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com

Սիրե՛լի հայրենակիցներ,

Հայաստանեայց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Սայր եկեղեցւոյ հոգաբարձութիւնը սիրով կը հրաւիրէ ձիւռեցի նշելու Սուրբ Սարգսի տօնը:

Ծրագրաւորում՝
* Հիւրասիրութիւն
* Աղի բլիթներ
* Ուրախ խաղեր
* «Մարուսիա» երգչախումբ
* Զարմանալի սեղանիկներ

Երեկոն բարձրաձայն երաժշտութեամբ կը խանգաւառուի յառաջապէս հրաւիրուած DJ ի (DJ KRET):

Եկէ՛ք ձիւռեցի Շաբաթ, 16 Փետրուար 2019 թ., կ.ա. ժամը 4:00-ին՝ միասնաբար տօնենք երիտասարդներու օրհնեալ օրը:

Եկեղեցւոյ «Մարի Մանուկեան» սրահին մէջ:

615 Avenue Stuart, Outremont, QC H2V 3H2

Սիրով կը սպասենք բոլորը:

Մուտքի արժէք՝ 10$
Փոքրերու արժէք՝ (3-12 տարեկան) 5$

Տեղերը սահմանափակ են, կը խնդրենք ապահովել նախապէս
Հեռաձայնելով՝ (438) 402-1487 կամ (514) 690-2890

Chers compatriotes,

L'Association des Jeunes de l'Église arménienne St. Grégoire l'Illuminateur de Montréal vous invite à fêter St.Sarkis.

Samedi le 16 février 2019, à 16 heures dans la salle Marie Manoukian, de l'église.

La soirée sera animée par D.J. KRET.

Venez donc commémorer la Fête de l'Amour et de la Jeunesse avec jeux, karaoke, surprises et compétitions dans une ambiance conviviale à la salle Marie Manoogian de l'église.

Adresse: 615, Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2

Prix de participation : $10.00

Pour les enfants : $5

Pour réservation appeler (438) 402-1487 ou (514) 690-2890

ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԱՅ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

ՏՕՆ
ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՁՕՐԱՎԱՐԱՑՆ
(Սկաւտներու Օրհնութեան Օր)

Հանդիսաւոր Ս. Պատարագ
Եւ Տօնակատարութիւն

Նախագահութեամբ՝ Թեմիս Բարեջան Առաջնորդ
Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ
Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան

Հինգշաբթի, 28 Փետրուար 2019, երեկոյեան ժամը 7-ին

Յաւարտ Ս. Պատարագի հիւրասիրութիւն << Վաչէ Յովսէփեան >> սրահին մէջ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը միասնաբար ոգեկոչելու Սրբոց Վարդանանց նահատակներու յիշատակի աւանդոյթը:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

École de dimanche

Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
- Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Զուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279–3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան

École de dimanche
Pour les enfants de 6 à 14 ans
Dans une ambiance chaleureuse et amicale on Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- Connaissance de la langue arménienne
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

Chaque dimanche à 11 heures

Pour plus amples informations et inscription
Contacter le secrétariat de l'Église (514) 279-3066
Père David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
E-Mail: stgregorychurch@gmail.com, *www.saintgregory.ca*
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՉՐՈՅՑ

Տ. ԴԱՒԻԹ ՔԵՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Études bibliques et discussions avec le R.P David Margaryan

Տեղի կ'ունենայ ամէն Հինգշաբթի երեկոյեան՝ ժամը 7:00-ին Եկեղեցւոյ մէջ:

Les jeudis soirs à compter de 19 heures

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից ըլլալու Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի՝ ներկայացուցած Աստուածաշնչական նիւթերուն:

Nous invitons nos chers fidèles à participer à ces séances d'interprétations bibliques.

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

Une collation de café et de thé est servie.

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Nous comptons sur votre participation massive.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

Դաշնակի Դասընթացքներ

Փոքրերու եւ չափասներու համար,
սկզբնակներու եւ երաժշտութեան հետեւողներու համար,
անհատական դասընթացքներ պիտի կատարուին՝
ամէն Կիրակի ժամը 11-էն սկսեալ,
արհեստավարժ եւ փորձառու դաշնակահարուհի՝
ԶԻՆԱՅՏԱ ՎԱՐՈՍԵԱՆԻ հետ:
Ծրջանաւարտ երաժշտագէտ McGill համալսարանէն
եւ արժանացած Քէպէքի Ոսկեայ Մետալին
Երաժշտական ծիրէն ներս:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար
կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակ՝
հեռ. (514) 279-3066 / stgregorychurch@gmailcom
կամ ուսուցչուհի՝ Զինայտա Վարոսեանի հետ
հեռ. (514) 945-586 zinaida.varosian@mcgill.ca

Piano lessons with a concert pianist

All ages – Children / Adults
For beginners & Music trainees
Individual courses will be held every Sunday at 11:00 am
Many years of experience
Theory & harmony
Preparation for Examen and competitions.
Master of Music in Performance from Mc Gill University
Quebec Gold Medalist
For further information
contact to the church office
at (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
or Teacher- Zinaida Varosian
at (514)945- 5816 / zinaida.varosian@mcgill.ca

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2

Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Պատանեկան Երաժշտական Խումբ

Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի կ'ունենան
Կիրակի օրերը կէսօրէ ետք, ժամը 1-ին:

Les répétions de la chorale des Jeunes ont lieu
Les dimanches à 13:00 heures

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:

- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ

TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY

MAY 7, 2019 MAY 20, 2019



The Women's Guild Central Council,
with the blessings of
H.G. Bishop Abgar Hovakimyan,
Primate of the Armenian Diocese of Canada,
organizes a

TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY

(Istanbul, Rodosto (Tekirdag), Bursa, Efes, Cappadocia, Kayseri, Adana, Musa Dag).

Cost $2,200 USD (double occupancy)
$2,600 USD (single occupancy)
Included: 13 nights accommodation at nice hotels, Breakfasts & dinners, professional guides (Armenian & English), Bosphorus by boat, transportation with high end buses, domestic flight.

Not included: international airfare, lunches, drinks, balloon tour in Cappadocia.

Places are limited !
Deposit $500 by March 7.
Full payment by March 31.

For details, please contact the Diocese at (514) 276-9479 or contact@armenianchurch.ca, or
WGCC Chair, Mrs. Anita Ohanessian at (647) 984-8568 or anita-ot@hotmail.com, or
Mrs. Ayda Afarian at (416) 885-0303 or aydaafarian@gmail.com